Հավելված
Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
նախարարի 2021 թվականի
մարտի 10-ի N 16-Լ հրաման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ջրային կոմիտեն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) ենթակա մարմին է:

2. Ջրային կոմիտեն ստեղծվում, վերակազմակերպվում է, և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով:

3. Ջրային կոմիտեն գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

4. Ջրային կոմիտեի անվանումն է՝

1) հայերեն՝ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

2) ռուսերեն՝ ВОДНЫЙ КОМИТЕТ

3) անգլերեն՝ WATER COMMITTEE

4) ֆրանսերեն՝ COMITÉ DE L'EAU

5. Ջրային կոմիտեն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով ու իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք և ձևաթղթեր: Ջրային կոմիտեն կարող է ունենալ խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Ջրային կոմիտեի կառուցվածքում ընդգրկվում են Ջրային կոմիտեի նախագահի, Ջրային կոմիտեի նախագահի տեղակալների, Ջրային կոմիտեի նախագահի օգնական(ներ)ի, Ջրային կոմիտեի

նախագահի տեղակալների օգնականների, գլխավոր քարտուղարի, գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնները, կառուցվածքային ստորաբաժանումները և գրասենյակը:

6. Ջրային կոմիտեին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է վերապահվել պետական բաժնետոմսերի կամ բաժնեմասերի տիրապետման իրավասություն:

7. Ջրային կոմիտեի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Վարդանանց 13ա:

II. ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Ջրային կոմիտեի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի քաղաքականության մշակման և իրագործման ապահովումը.

9. Ջրային կոմիտեի խնդիրներն են՝

1) պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարումն ու անվտանգ օգտագործման ապահովումը.

2) ջրային կոմիտեի իրավասության սահմաններում ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը.

3) ջրային համակարգերի ներդրումային քաղաքականության մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ներդրումային ծրագրերի փորձաքննության կազմակերպումը:

III. ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

10. Ջրային կոմիտեի գործառույթներն են՝

1) ոլորտի զարգացման և բարեփոխումների ռազմավարության, այդ թվում՝ ֆինանսական ռազմավարության մշակումը և իրականացման ապահովումը, ինչպես

նաև դրանցից բխող ներդրումային ծրագրերի նախապատրաստումը և կառավարումը, պայմանագրերի կնքումը և կառավարումը.

2) օգտագործելի ջրային ռեսուրսների պահանջարկի հաշվարկման ամենամյա և հեռանկարային աշխատանքներին մասնակցելը.

3) օգտագործելի ջրային ռեսուրսների վերաբաշխման աշխատանքների իրականացման ապահովումը.

4) ոլորտում խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման, ոռոգման համակարգերի, ջրամբարաշինարարական և այլ ջրային համակարգերի ներդրումային ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կառավարման լիազորությունների իրականացումը.

5) ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունների կանոնակարգում.

6) ջրային համակարգերի վրա ազդող օբյեկտների շինարարական և վերակառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի նախնական փորձաքննության ապահովումը, քննարկումներին մասնակցելը և առաջարկություններ ներկայացնելը.

7) Կառավարության հաստատած կարգով հիդրոտեխնիկական կառուցվածքների օգտագործման անվտանգության վերահսկումը.

8) ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերում աշխատանքների կազմակերպման վերահսկումը.

9) իր ունեցած լիազորությունների շրջանակում ոլորտում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում պետական բաժնեմասի (գույքի) կառավարման լիազորությունների իրականացում՝ ներառյալ պետական սեփականություն հանդիսացող ջրային և ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերի կնքման և օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ապահովումը.

10) ջրամատակարարման, ինչպես նաև այլ ջրային համակարգերում կորուստների նորմատիվների մշակմանը մասնակցելը.

11) սակագների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը.

12) ջրային հողերի ու դրանց ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների օգտագործման սահմանափակումների և նորմերի սահմանումը.

13) Կանոնակարգում և կազմակերպում է ջրային համակարգերի օգտագործման և պահպանության տեխնիկական հանձաժողովի աշխատանքները,

14) ուսումնասիրելով պետական մասնավոր համագործակցության շրջանակներում ներկայացված առաջարկությունները՝ մշակում է ոլորտի զարգացման ռազմավարական պլանները և առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների գույքի համալրման կապիտալ ներդրումային ծրագրերը,

15) ապահովում է պետական մասնավոր գործընկերության շրջանակներում վարձակալության հանձնված գույքի կադաստրի վարումը.

16) ջրային համակարգի կայուն նպատակային շահագործման ու դրանից բխող բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման նպատակով ՀՀ կառավարություն ներկայացնում է առաջարկություններ

17) Կազմակերպում է ջրային համակարգերի օգտագործման իրավունքի փոխանցումը, առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության անունից կնքում է պայմանագրեր

18) Վարձակալության պայմանագրերով սահմանված Կոմիտեի՝ որպես Վարձատուի, ինչպես նաև հավատարմագրային կառավարման պայմանագրերով Կոմիտեին վերապահված գործառույթների, իրավունքների և պարտավորությունների իրականացման ապահովում.

19) Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի համակարգում, առաջարկությունների ներկայացում, արդյունքների ամփոփում:

20) Ջրամատակարարում և ջրահեռացում (կեղտաջրերի մաքրում) իրականացնող մասնագիտացված կազմակերպությունների կողմից չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման խնդիրների լուծմանն ուղղված

առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացում

21) անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության օպերատիվ խնդիրների լուծման նպատակով ներկայացնում է առաջարկություններ

22) համայնքների բյուջեների միջոցով և պետական բյուջեի համաֆիմամսավորմամբ համայնքներում իրականացվող խմելու և ոռոգման համակարգերի բարելավմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի նախագծերի առաջարկությունների ներկայացում:

23) համակարգում և իրականացնում է խմելու և ոռոգման ջուր մատակարարող կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման մոնիթորինգ և վերլուծություններ

24) մշակում և իրականացնում է ցամաքուրդային (դրենաժային) համակարգերից օգտվող սուբյեկտների միջև փոխհարաբերությունները:

25) պետական ջրային կադաստրում հիդրոտեխնիկական կառուցվածքների հաշվառում և դրանց օգտագործման պայմանների քանակական և որակական տվյալները մուտքագրում

26) ջրային համակարգերի պահպանման և տեխնիկական սպասարկման ծախսերի հատուցման նպատակով պետական բյուջեից տրվող սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային արտոնությունների մասով ներկայացնում է առաջարկություններ

27) գետերի ափապաշտպան կառուցվածքների, հեղեղավտանգ հատվածների, առաջնահերթ միջոցառումների իրականացում, ինչպես նաև աղետների հետևանքով առաջացած վնասը ժամանակին հնարավորինս նվազեցնելու նպատակով տեղեկատվական համակարգի կառավարում,

28) Որոտան-Արփա-Սևան հիդրոհամալիրի շահագործման և պահպանման ոլորտում օրենսդրական դաշտի բարելավման, անվտանգության տեխնիկայի ապահովման հետ կապված կարգերի, կանոնների և այլ նորմատիվային փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների իրականացում,

29) Ապահովում և իրականացնում է ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի գործադիր մարմնի լիազորությունները։

30) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթեր, տեղեկանքներ և այլն) ներդրումը և, դրանց միջոցով հավաքագրված տվյալների ու տեղեկությունների հիման վրա, վարչական վիճակագրական ռեգիստրների վարումը.

31) վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքին համապատասխան վարչական իրավախախտումների վերաբերյալ իրեն վերապահված գործերով վարույթի իրականացումը.

32) Ջրային կոմիտեի իրավասությունների սահմաններում ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային համագործակցության իրականացմանն օժանդակումը.

33) Ջրային կոմիտեի իրավասության շրջանակներում զորահավաքային նախապատրաստության, զորահավաքի և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորման և իրականացման ապահովումը:

IV. ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

11. Ջրային կոմիտեի կառավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության նախարարը (այսուհետ՝ նախարար):

12. Նախարարը՝

1) հաստատում է Ջրային կոմիտեի կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կատարում կանոնադրության փոփոխություններ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

2) օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված գործունեության ոլորտին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ սահմանում է Ջրային կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

3) իրականացնում է Ջրային կոմիտեի գործունեության վերահսկողությունը.

4) լսում է Ջրային կոմիտեի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում Ջրային կոմիտեին ամրացված կամ օգտագործման հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

6) հաստատում է տարեկան հաշվեկշիռը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

13. Ջրային կոմիտեն ղեկավարում է Ջրային կոմիտեի նախագահը:

14. Ջրային կոմիտեի նախագահին անմիջական հաշվետու են Ջրային կոմիտեի նախագահի տեղակալները, գլխավոր քարտուղարը, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների ղեկավարները, Ջրային կոմիտեի նախագահի օգնական(ներ)ը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և գրասենյակի ղեկավարը:

15. Ջրային կոմիտեի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը:

16. Ջրային կոմիտեի նախագահը հաշվետու է Կառավարությանը, վարչապետին և նախարարին:

17. Ջրային կոմիտեի նախագահը՝

1) պատասխանատու է Ջրային կոմիտեի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից, ինչպես նաև տալիս է Հայաստանի Հանրապետության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

3) իրականացնում է Ջրային կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների կառավարումը, ինչպես նաև իր ունեցած լիազորությունների շրջանակներում համակարգում է Ջրային ոլորտի կազմակերպությունների գործունեությունը.

4) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական հրամաններ, տալիս հանձնարարականներ.

5) օրենքով կամ Ջրային կոմիտեի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է մարմնի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) հաստատում է ներքին կարգապահական կանոնները.

7) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստեղծում է իրեն կից խորհրդակցական մարմիններ.

8) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում գլխավոր քարտուղարի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները.

9) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում իր տեղակալների, գլխավոր քարտուղարի հանձնարարականները.

10) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Ջրային կոմիտեի ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների և գրասենյակի ղեկավարների

Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները, ցուցումները, հանձնարարականները.

11) լսում է կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների և հիմնարկների հաշվետվությունները, քննում է դրանց գործունեության ստուգման արդյունքները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

18. Ջրային կոմիտեի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջրային կոմիտեի նախագահի տեղակալի առավել երկար ստաժ ունեցող տեղակալը:

19. Ջրային կոմիտեի հաստիքացուցակը Ջրային կոմիտեի նախագահի առաջարկությամբ հաստատում է նախարարը:

20. Ջրային կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) գործում է Ջրային կոմիտեի նախագահից պատվիրակված լիազորությունների ուժով և համակարգում է աշխատանքներն (գործունեությունը) իրեն հանձնարարված ոլորտում.

2) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակայությանը հանձնված կազմակերպություններին, հիմնարկներին և գրասենյակին փոխանցում է Ջրային կոմիտեի նախագահի հանձնարարականները, ապահովում է Ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, ենթակայությանը հանձնված կազմակերպությունների, հիմնարկների և գրասենյակի կողմից Ջրային կոմիտեի նախագահի հանձնարարականների կատարումը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում է հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ջրային կոմիտեի նախագահին.

3) իր համակարգման լիազորությունների շրջանակներում ստանում է գլխավոր քարտուղարի աջակցությունը, համագործակցում է այլ մարմինների և կազմակերպությունների հետ.

4) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ջրային կոմիտեի նախագահին ներկայացնում է առաջարկություններ.

5) իրականացնում է Ջրային կոմիտեի նախագահի կողմից տրված ցուցումները և հանձնարարականները:

21. Ջրային կոմիտեի նախագահի տեղակալը կարող է ունենալ օգնական: Ջրային կոմիտեի նախագահի տեղակալն իր օգնականի անմիջական ղեկավարն է: Ջրային կոմիտեի նախագահի տեղակալի օգնականը անմիջական հաշվետու է Ջրային կոմիտեի նախագահի տեղակալին:

22. Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարը

1) առանց լիազորագրի՝ «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սահմաններում հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից և ներկայացնում նրա շահերը, կնքում է գործարքներ, իր իրավասությանը վերապահված հարցերով տալիս է լիազորագրեր.

2) օրենքով, այլ իրավական ակտերով և կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Ջրային կոմիտեին ամրացված պետական գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) օրենքով նախատեսված դեպքերում նշանակում և ազատում է Ջրային կոմիտեի համապատասխան աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

4) Ջրային կոմիտեի նախագահին է ներկայացնում Ջրային կոմիտեի հաշվեկշիռը.

5) Ջրային կոմիտեի նախագահին է ներկայացնում առաջարկություններ Ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների կազմակերպական հարցերի վերաբերյալ.

6) Ջրային կոմիտեի նախագահին է ներկայացնում աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության հաշվետվությունները և մյուս ստորաբաժանումների մասով՝ իր իրավասության շրջանակներին վերաբերող

տեղեկատվություն, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հաշվետվություն.

7) իր համակարգման լիազորությունների շրջանակներում համագործակցում է Ջրային կոմիտեի նախագահի տեղակալի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ.

8) իր համակարգման լիազորությունների շրջանակներում Ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներին, ենթակա պետական մարմիններին, կազմակերպություններին և հիմնարկներին փոխանցում է Ջրային կոմիտեի նախագահի հանձնարարականները կամ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ իրականացնում հսկողություն՝ արդյունքների մասին տեղեկացնելով Ջրային կոմիտեի նախագահին.

9) անհրաժեշտության դեպքում կնքում է կառուցվածքային ստորաբաժանումների պատրաստած, ինչպես նաև իր և (կամ) Ջրային կոմիտեի նախագահի և (կամ) Ջրային կոմիտեի նախագահի տեղակալի անունից պատրաստված փաստաթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

10) օրենքով նախատեսված դեպքերում ընդունում է անհատական հրամաններ, տալիս հանձնարարականներ.

11) Գլխավոր քարտուղարը կարող է ունենալ տեղակալ, ով փոխարինում է նրան բացակայության ժամանակ: Գլխավոր քարտուղարն իր տեղակալի անմիջական ղեկավարն է: Գլխավոր քարտուղարի տեղակալն անմիջական հաշվետու է գլխավոր քարտուղարին: Գլխավոր քարտուղարի տեղակալների թիվը սահմանում է վարչապետը:

V. ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

23. Ջրային կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ոռոգման և կոլեկտորադրենաժային համակարգերի վարչություն.
2) Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վարչություն.
3) Ակտիվների կառավարման և ներդրումների համակարգման վարչություն
4) Մոնիթորինգի և վերլուծությունների վարչություն.
5) Ներքին աուդիտի բաժին

Ջրային կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներն են՝

1) Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչություն.
2) Գնումների վարչություն
3) Քարտուղարություն.
4) Իրավաբանական բաժին
5) Արտաքին կապերի բաժին
6) Զորահավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության բաժին:

24. Ջրային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանում է Ջրային կոմիտեի նախագահը՝ հաստատելով դրանց կանոնադրությունները:

VI. ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՒՅՔԸ

25. Ջրային կոմիտեն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

26. Ջրային կոմիտեի գույքը ձևավորվում է օրենսդրությամբ սահմանված կարգով Ջրային կոմիտեի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից:

27. Ջրային կոմիտեին հանձնվող գույքի կազմը և չափը որոշում է Կառավարությունը:

28. Ջրային կոմիտեն տիրապետում, օգտագործում, իսկ այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում նաև տնօրինում է իրեն հանձնված գույքը:

VII. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Ջրային կոմիտեն վարում է հաշվապահական հաշվառում և օրենքով սահմանված կարգով ներկայացնում հաշվապահական հաշվետվություններ:

30. Ջրային կոմիտեի ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

31. Ջրային կոմիտեի ֆինանսական գործառնություններն իրականացվում են գանձապետական համակարգի միջոցով:

32. Ֆինանսական գործառնությունների իրականացման համար պատասխանատու է գլխավոր քարտուղարը, որն իրականացնում է «Գանձապետական համակարգի մասին» օրենքով սահմանված լիազորությունները:

33. Ջրային կոմիտեի կողմից հաշվապահական հաշվառում վարելը և հաշվետվությունների ներկայացումը համակարգում և ապահովում է գլխավոր քարտուղարը: